

- 1(1655). Ականջացավի դեպքում — Կտավհասան ձեթը տաքացնում և դու վիճակում կաթեցնում են ականջի մեջ: Աղ են տաքացնում, դնում: Սոխի ծիր կտավհասի ձեթով եփում են, դնում են ականջը:
- 2(1656). Մեջքի ցավ — Զլուծից կամ խնկից յախու են դցում, բրգյա աաք ջալ կապում կամ նոր մորթած ոչխարի մորթին աաք-աաք կապում են մեջքին:
- 3(1657). Գուրմուկ — Լուսնյակ գիշերին դուրս են գալիս նորալուսնի դեմ և ասում. նոր, նոր, նոր աղիդ, Կաադե կոծոծ՝ կուաա դիս, Կտրե կոծոծ, չուտա դիս: կրկնում են երեք անգամ, ապա վերցնում երեք դուլդ դարու հաաիկ և թողում ճանապարհի մեջտեղը:
- 4(1658). Այլալաճ — Զհանդած կիւրը կես րաժակ ջրով րացում են, վրան ավելացնում կտավհասի ձեթ և քսում այրվածքին: Լվացքի օճառ են քսում սպիւսակ կտորի վրա և կապում վերքին:
- 5(1659). Աստվաճացավ — Փշացած աաամի մեջ դնում են շիր, աաքացրած աղ, օղիով ողողում են, բրինձը այրում են, յուղը րամրակով դնում են փշացած աաամի արանքում:
- 6(1660). Հազի դեմ — Էշի կաթ են խմում. մեղր ու կաթ խառնում են իրար և խմում, աաքացրած այծի ճրագուն քսում են թիկունքին և կրծքին, խորոված սոխ կամ խնձոր են ուտում. ջրաղացի ջրի սաոցակաոր են կուլ տալիս. ոչխարի կրծքավանդակի յուղոա միսը խաշում են և ուտում:
- 7(1661). Վերքի դեմ — Մահլամ են եփում և մետաքսե կաորի վրա քսելով՝ քաշում են վերքին: Իսկ մահլամը՝ սպեղանին, եփում են հեանյալ կերպ. մեղրամմը հալում են, վրան ավելացնելով կտավհասի ձեթ կամ սոսկ մեղրամմը եփում են, կրակից վերցնում, սաոեցնում և քսում վերքին:
- 8(1662). Մազերը քալիվելու դեմ — Գարնան սխոորը լավ ծեծում են և քսում մազերից թափված աեղեղը, այնքան են

քսում, որ մի քանի օրից հետո մաշկը այրվում, հասաանում և սկսում է թափվել, իսկ մաղերը սկսում են աճել: Նաե հինա են դնում, իսկ մաղերը աճեցնելու համար՝ սագի ճարպ:

- 9(1663). Մառնաշունչ — Մեղրով խմոր են սալքում և գնում վրան, մինչե ուռուցքը հասունանա. երբ այն ծակվում է, եղան լեղու կամ մահլամ (սպեղանի) են դրնում վրան:

10(1664). Մաաը տաք կաթի մեջ են դնում:

- 11(1665). Կտավհասը կաթով եփում և դնում են վերքին:

- 12(1666). Մալոբո — Աղաջրով շփում են մարմինը կամ եղինջով խփում: Հիվանդը գնում է նաե երեք կին աոած տղամարդու երգիքից կոանում և կանչում. «մալաբյորի դեդն ի՞նչ ա՛: Ներքեից ասում են. «Մե կաոր խացա՛: Հացը երգիքից աալիս են, հիվանդը ուտում և իջնում է ցած: Թոնրի ծիւց դլխացավ աոաջանալու կամ թունավորվելու դեպքում թթվի ջուր են խմում կամ թթու թան:

- 13(1667). Հաճախ միգելու դեպքում — Կաթն ու կտավհասը եոացնում են և հիվանդին նստեցնում վրան, աղյուս են տաքացնում դնում ոտքերի աակ. եփում են փիփերթ կուլված բույսը և ջուրը խմում:

- 14(1668). Միգակապալոթյան ժամանակ — Ավելուկը խաշում են և խմում:

- 15(1669). Քեաքեռ միջոց — Օգտադործում են խաշխաշ բույսը:

- 16(1670). Վալսեալու դեպքում — Մեղ են խմեցնում:

- 17(1671). Էրեթիկ կուլված հիվանդությունը բուժում են բրնձի յուղով. նախապես այրում են բրնձը, ապա անջատված յուղը քսում վերքին:

- 18(1672). Կոպացավի դեպքում — Խնկից յախու են դնում: Խունկը մանրում են, կապույա թուղթը դցում օղու մեջ, հանում, խունկը թանդիֆով մաղում, լցնում թղթի վրա և կապում, եթե ցավ է լինում, յախուն կաշում է, եթե ոչ՝ չի կաշում: Բացի յախուից, նաե ցավոտ տեղը օղիով շփում են: